- Մնուանակոչութիւն Նորին Կայսերական Բարձրութեան բարեպաշտ Թագաւորի Մեծի իշխանի Գիւստրի Կոնստանտինովիշի:
- 22 Սասնական տօն կարգի Առաքելաշաւիղ սուրբ իշխանին Ալագիսիրայ:
- 28 Մնուանակոչութիւն Նորին Կայսերական Բարձրութեան բարեպաշտ Թագաւորի Մեծի իշխանի Աեազէսլավ Կոնստանտինովիշի:

- 4 Ծնունդ Նորին Կայսերական Բարձրութեան բարեպաշտ Թագաւորի Մեծի իշխանի Միխայիլ Միխայիլովիչի:
- 5 Ծնունդ Նորին Կայսերական Բարձրութեան բարեպաշտ Թագուհւոյ Մեծի իշխանուհւոյ Մարիա Ալեքսանդրովնայի:
- 13 Ծնունդ Նորին Կայսերական Բարձրութեան բարեպաշտ Թագաւոր Մեծի իշխանի Միխայիլ Նիկոլայեւիչի:

ՆՈՅՆՄԻՆԸ

- 6 Ծնունդ Նորին Կայսերական Բարձրութեան բարեպաշտ Թագաւորի Մեծի իշխանի Նիկոլայ Նիկոլայեւիչի կրտսերոյ
- 8 Անուանակոչութիւն Նոյին Կայսերական Բարձրութեանց բարեպաշտ Թագաւորաց Մեծ իշխանաց Միխայիլ Նիկոլայեւիչի և Միխայիլ Միխայիլովիչի:

- Տօն ա Ղնայն ասպետական կարգաց ինքնակալութեան Ռուսաց:
- 24 Մնուանակոչութիւն Նորին Կայսերական Բարձրութեան բարեպաշտ Թագաւոր Մեծի իշխանուհւոյ Եկատերինա Միխայիլովնայի:
- Ասպետական տօն կարգի Սրբուհւոյ Եկատերինեայ:
- 26 Մնուանակոչութիւն Նորին Կայսերական Բարձրութեան բարեպաշտ Թագաւորի Մեծի իշխանի Գեորգի Միխայիլովիչի:
- Ասպետական տօն կարգի Սրբոյն Գեորգեայ:
- 30 Ասպետական տօն կարգի Սուրբ Առաքելոյն Անդրէի:

ԴԵՎՏԵՄԲԵՐ

- 6 Մնուանակոչութիւնք Նոյն Կայսերական Բարձրութեանց բարեպաշտ Թագաւորաց Մեծ իշխանաց Նիկոլայ Կոնստանտինովիչի և Նիկոլայ Միխայիլովիչի:

22 Մեռանակոչութիւն Նորին Կայ-
սերական Բարձրութեան բարե-
պաշտ Թագուհւոյ Մեծի Իշխա-
նուհւոյ Սնատասայ Միխայիլով-
նայի:

Սոխակը նստած վարդենիի տակ,
Երգ էր յօրինում հազար բիւր տեսակ,
Սէր, յոյս բերկրութիւնն ազատութիւն
Նորա երգերիցն էին դուրս փայլում:
Օրն էր Մայիսի, արփու շողերը
Հալածել էին ձիւն ու սպողերը,
Մայր-ընտելութիւնը ինչոյք էր արել,
Սշխարհ արարած մէջէն հրաւիրել:
Ծիծառ, դեղձանիկ, կարմրալանջ,
սարեակ,
Սրուռ, դրախտապան, կանեփուկ,
տատրակ,
Ըշտապով թողին Հարաւ Հիւսիսը,
Եկան Հայաստան, անդ էր մէջիսը:
Սարից փըշեցին հեղիկ սիւղերը,
Բացին ամօթխած վարդի թըշերը,
Սառած ակերը փըշեցին շըթման,
Ուրախ կարկաջմամբ սարն ի վայր
ինջան:
Սոխակը նստաւ վարդենիի տակ,
Երգեր յօրինեց հազար բիւր տեսակ,
Սէր, յոյս, բերկրութիւնն ու ազատու-
թիւն
Նորա երգերից էին դուրս բըղխում:

Սոխակը նստած վարդենիի տակ,
 Երգ էր յօրինում հազար բիւր տեսակ,
 Սէր, յոյս բերկրութիւն և աղատութիւն
 Նորա երգերիցն էին դուրս փայլում:
 Օրն էր Մայիսի, արփու շողերը
 Հալածել էին ձիւն ու սպառները,
 Մայր-բնութիւնը ինչոյք էր արել,
 Աշխարհ արարած մէջլիս հրաւիրել:
 Ծիծառ, դեղձանիկ, կարմրալանջ,
 սարեակ,
 Արտուտ, դրախտապան, կանեփուկ,
 տատրակ,
 Ըշտապով թողին Հարաւ Հիւսիսը,
 Եկան Հայաստան, անդ էր մէջլիսը:
 Սարից փռչեցին հեզիկ սիւգերը,
 Բացին ամօթխած վարդի թըշերը,
 Սառած ակերը փչրեցին շրդթան,
 Ուրախ կարկաչմամբ սարն ի վայր
 ինչան:
 Սոխակը նստաւ վարդենիի տակ,
 Երգեր յօրինեց հազար բիւր տեսակ,
 Սէր, յոյս, բերկրութիւն ու աղատու-
 թիւն
 Նորա երգերից էին դուրս բըղխում:

Մրեն էր ցոլուն, երկինքը պայծառ,
Գաշտի մ, ջ սրբաւած ծաղկունք, [Թուփ
ու ծառ,

Հովք հանդարտիկ, ջրերը խոխոջուն,
Գարնան գալուստը են ամենք տօնում:
Մէնակ նստած բուն՝ յանլոյս ծրմակին,
Մնհաղորդ մնաց բնու [Թեան հրաւէրքին
Մու[թ, գիծին ծակէն բո՛ւ բո՛ւ էր
վայում,

Չահլա էր տանում, աղպա[թ էր
խառնում:

«Ի՞նչ է գծվել այս յիմար բլբուլը,
«Ի՞նչ է հաւաքել շորս դին այս բոյլը,
«Ի՞նչ է տեսել որ խելքն է [Թըռցրել,
«Ի՞նչ է մ[թնումը ձէն գլխին գըցել»:

Լըսեց խաւսոտ ձայնն՝ աշուղ անցաւոր,
Սաց «Գու՛ եղբայր բո՛ւ շես յանցաւոր.

«Բլբուլը հըլու այն մը [Թնուլորտին,
«Որ պատած ունի նորա ամեն դին.

«Քեզ վերայ էլ այն է միայն ազդում,
«Ինչ քո բոլորտիքն են շրջապատում.

«Նըրան հովանի հոգին բերկրական,
«Քեզ [Թախծարեր են սարսուռք գէճ

մը [Թան»:

ԴՍՍՏՈՒՍԿ, ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ
ԵՒ (ՄՆՁՆՈՒՄԴՈՐԾ) ՊՍՏԿԵՐ
ՍՈՒՐԲ ՍՍՏՈՒՍԾՍԾՆԻ:

Մեր ազգն ունի երկք աստուածա-
պարզէ դանձ, որ ասենայն Հայոց
ազգի պարճանաց արճաններն են, և
չգիտենք թէ ինչ է պատճառը, որ մեր
Եկեղեցւոյ մէջ նոցա յիշատակը չէ ե-
րևում: Պատկերներու մէջ տեսնում
ենք, որ Սրգարը իւր դեպքանի ձեռ-
քէն ստանալով Գաստապարճ առող-
ջութիւն զգալու ուրախութիւնն է յոյց
ուալիս: Թողէնու առաքեալը գալիս է
Սրգարի առջև Գեղարդը ձեռքն: Բար-
թողիմէնու առաքեալը գալիս է Հա-
յաստան՝ Ստուածածնի պատկերն-էլ
հետը: Եթէ ասենք թէ՛ նկարիչ-
ներուն հաւատալ չէ կարելի, որով-
հետև շատ անգամ նոցա նկարը լինում է
երեակայութեան ծնունդ, ահա՛ պատ-
մութիւնն-էլ է ասում Մովսէս Խորե-
նացւոյ բերանով «Բարթողիմէնու ա-
ռաքեալը դեռ չէր հասել Երուսաղէմ,
կրք որ սուրբ Ստուածածինը վերա-

փոխակեցաւ: Առաքեալները տեսնե-
 լով Քարթոզիսէոսի տրամութիւնը և
 անմխիթար կոծը՝ յաճնեցին նրան այն
 պատկերը, որն որ Յոհաննէս աւետա-
 րանիչը կիպարիսի տախտակի վրայ
 ձեացուցանել էր կամեցել, այլ սուրբ
 Ստուածածինը իւր երեսի վրայ դնե-
 լով՝ տպաւորութեամբ օրհնել և սըր-
 բացուցել»): Այս պատկերը Քարթոզի-
 մէոս բերել է Հայաստան: Այլադղեաց
 յայտաւորաց մէջ կայ մէկ Ստ-
 տուածածնի պատկերի սքանչելահարաշ-
 յայտնութիւն՝ Միասէնումը, ուր տառ-
 մըլում է թէ՛ պատկերամարտութեան
 հալածանաց խամանակը այն պատկերը
 ձգել էին Սզուբ գետը, որ յետ իրր
 հարիւր տարւոյ յայնուեցաւ: Մեր
 կարծեօք Միասէնը էջմիածինն է: Մէկ
 ուրիշ տեղ Միասէն անունով քաղաք
 կամ գեղ չենք գտել. իսկ Սզուբ՝ Յու-
 նաց կործակեցու բարբառով գուրս է
 եկել Սխուրեան և ջուր բառերէն.
 Էջմիածնի պատկերը ձգել են Սխու-
 րեանի ջուրը: Հայոց մէջ չէ երևում
 այս աւանդութիւնը. և ի՞նչ փոյթ,

միժէ կարծիք չկայ, որ Ղաղանու սուրբ Ստուածածնի պատկերը Հայոց եկեղեցումն է յայտնալել, երբ որ եկեղեցին ամայացել էր:

Գաստառակի համար խօսիլ-էլ չէ հարկաւոր, նորա ինչպէս Հայաստան Եղեւիա գալն է յայտնի, այնպէս-էլ նորա յայտնութիւնն է քաջայայտ, և Պօլիս տարուիլը:

Սուրբ Գեղարդի համար Ղաղարկաթողիկոսի վկայութիւնը կայ, որ ասում է. «ի Հայաստանն է Ստուածամուխ գեղարդն սուրբ»: Ազգն վաղուց հաւատացել է, որ այն գանձը Էջմիածնումն է, և մեր ժամանակներումը բերուել է Թիֆլիզ ժանտախտի պատճառաւ:

Թէպէտ անդեակ չենք լիակատար այն պատմութեան, թէ նա ինչպէս տարուեցաւ օտար աշխարհներ, սակայն չենք կարող համանդամայն խտտել այն պատմութիւնը, որ Խաչակրաց արշաւանի ժամանակը, երբ որ Մուսիոք քաղաքը պաշարման տառապանաց մէջն էր, հաշակուեցաւ թէ

սուրբ Գեղարդը գտնուեցաւ, և այն
 տեղէն ենք կարծում թէ միսանգամ
 ընկաւ Հայոց ձեռքը, որովհետև Ռու-
 բենեան հարստութեան հիմնադիր
 Ռուբէն իշխանի որդին Կոստանտին
 իշխանը այն տեղ էր, և մեծ երախ-
 տիք ունէր խաչակիր քրիստոնեայ զօ-
 րաց վրայ, և նա միս անգամ կարո-
 ղացաւ Հայոց ազգի սեփականութիւ-
 նը յետ առնուլ օտարներու ձեռքէն,
 և իւր բնիկ հովանաւորեալ ժողո-
 վրդեան դարձնել: Սուրբ Գեղարդը
 մնաց Վելիկիա՝ Սոսյ կաթողիկոսու-
 թեան մէջ, մինչև որ կաթողիկո-
 սութիւնը վերադարձաւ սուրբ Էջ-
 միածին, այն ժամանակը Լուսաւորչի
 Սջի և այլ սրբութեանց հետ միա-
 սին այն սուրբ Գեղարդն-էլ եկաւ
 Էջմիածին: ՍՅԼ ինչ որ ասած է, թէ
 մէկ Լատինացի ասպետ կամեցել է
 փորձել Սասունուն և այլն, հիւսուա-
 ճոյ բաներ են, Լատին կարգաւորաց
 հնարած, որ խաղողին չհասնելով կա-
 մեցել են խակ անուանել:

ՄՈԼՈՐԱԿՔ

Հին ժամանակներումը եօթն մուրա-
րակք միայն գիտէին, որք են՝ Երեւակ,
Լուսնիժագ, Հրատ, Սրեգակն, Լու-
սարեր, Փայլածու և Լուսին: Յետոյ
հասկացան, որ Սրեակը մուրակնե-
րու կենտրոնն է, մուրակները նորա-
չորս կողմը են պտոյտ դալիս: Մուր-
ակները մեծ ու պատիկ են:

Մեծ մուրակներն են բաց ի Սրե-
գակնէն և Լուսինէն.

	Սժ.	Օր.
Փայլածու՝ որ Սրեգակի չորս պտոյտը ման է դալիս	—	80
Լուսարեր	—	225
Երկիր		365
Հրատ	1	322
Լուսնիժագ	11	315
Երեւակ	29	167
Ռերան	84	6
Նեպտուն	165	358

Մանր մուր. մանկնդալիս :	Սրբու մի :	Շրջանակը օր	Ո՞վ է գտել :
Փլորա	3	97	Գինգ
Սրիադնա	3	99	Պողտոն
Հարմանիա	3	151	Գուլղշմիղ
Փերոնիա	3	158	Պետերս
Մերիամենա	3	175	Գինգ
Վիկտորիա	3	207	Գինգ
Եւտերպա	3	218	Գինգ
Վեստա	3	230	Օլբերս
Ուրանիա	3	233	Գինգ
Նեմառաս	3	234	Լորան
Մեիտա	3	251	Գրադամ
Իրիդա	3	251	Գինգ
Էիսո	3	256	Ֆերդուսոն
Սուսոնիա	3	257	Գասպարիա
Փոկէա	3	262	Շակորնակ
Գամինա	3	263	Գուլղշմիղ
Մաստալիա	3	270	Գասպարիա
Սզիա	3	280	Պողտոն

Յ ԵՄ Ո՛ւր է Գրեցի:	Տարիներ 1847	Տարիներ 1857	Տարիներ 1836	Տարիներ 1861
Լոնդոն	282	2	1847	8
Օքսֆորդ	282	2	1857	43
Փարիզ	282	2	1836	40
Համբուրգ	282	2	1861	72
Լոնդոն	282	2	1832	18
Լոնդոն	709	2	1830	12
Լոնդոն	258	2	1833	27
Բրեմեն	2	2	1807	4
Լոնդոն	12	2	1834	30
Նիմ	12	2	1838	31
Մարկ. Կասթ	2	2	1848	9
Լոնդոն	12	2	1847	7
Վաշինգթոն	12	2	1860	60
Նեապոլ	22	2	1861	63
Մարսիլիա	78	2	1833	23
Փարիզ	22	2	1836	41
Նեապոլ	22	2	1832	20
Մադրաս	22	2	1861	67

Մանր մուր. ման են գալիս:	Սրբու ամ:	Շրջանակը օր	Ո՞վ է գտել:
Նիսա	3	282	Գուրդ շմիր
Հերա	3	283	Հենկէ
Լուտեցիա	3	292	Գուրդ շմիր
Իզիդա	3	296	Պողտան
Փորտունա	3	298	Գինդ
Պարթենոպա	3	307	Գասպարիս
Փեախիա	3	325	Լուտեր
Հեսաիա	4	6	Պողտան
Սմիխորիդա	4	30	Մարա
Եգերիա	4	50	Գասպարիս
Ստրէա	4	50	Հենկէ
Պամնա	4	61	Գուրդ շմիր
Իրենա	4	61	Գինդ
Մեղետա	4	68	Գուրդ շմիր
Կալիպաս	4	87	Լուտեր
Իիանա	4	93	Լուտեր
Թալիա	4	95	Գինդ
Պանոպէա	4	96	Գուրդ շմիր

Պատմական համար	Տարի	Տարի	Տարի	Տարի
Փարիզ	1801	1837	44	
Գրիզեն	1801	1847	6	
Փարիզ	1811	1852	21	
Օքսֆորթ	1821	1856	42	
Լոնդոն	1831	1852	19	
Նեապոլ	1831	1850	11	
Բիլբ	1831	1852	17	
Օքսֆորթ	1831	1857	48	
Լոնդոն	1831	1854	29	
Նեապոլ	1831	1850	18	
Գրիզեն	1831	1845	5	
Փարիզ	1831	1854	32	
Լոնդոն	1831	1851	14	
Փարիզ	1831	1861	56	
Բիլբ	1831	1858	53	
Բիլբ	1831	1863	78	
Լոնդոն	1831	1852	23	
Փարիզ	1831	1861	70	

Մանր մուր.
ման են գալիս:

Սրևու աճ:

Շքնակալ
օր

Ո՛վ է
գտել:

Փիղէս 7881	4	108	Լուտեր
Եւնովիա 181	4	109	Գասպարիս
Ղիրգիւնիա 1	4	113	Ֆերգուսոն
Պրոպերփինա	4	120	Լուտեր
Եւրիդիկա 1	4	127	Պետերս
Մայիա 181	4	127	Թու. թ. լ.
Կլիտիա 2681	4	129	Թու. թ. լ.
Իւնոնա 7881	4	133	Հարգիւնգ
Փրիգգա 881	4	136	Պետերս
Մեղելինա 81	4	140	Թէմպէլ
Կիրկէա 181	4	148	Շաքորնակ
Կանկորդիա 1	4	153	Լուտեր
Սէքսանդրա	4	168	Գուլդշիլդ
Ուլիմպիա 881	4	172	Շաքորնակ
Եւգենիա 881	4	179	Գուլդշիլդ
Լեոտոնա 8081	4	180	Լուտեր
Լեգա 2081	4	196	Շաքորնակ
Ստալանտա 1	4	204	Գուլդշիլդ

ԲՆԱԿ ԳԻՆԻ	ՊԵՐՏԵՆԻ ՊԵՐՏԵՆԻ	ՊԵՐՏԵՆԻ ՊԵՐՏԵՆԻ	ԳՆԱԿ ԳՆԱԿ	ԳՆԱԿ ԳՆԱԿ
ԲԻԼԲ			1855	37
Նէասալ			1851	15
Աաշինգթոն			1857	30
ԲԻԼԲ			1853	26
Համիլթոն			1862	75
Քեմբրիջ. ՄՏ.			1861	66
Քեմբրիջ. ՄՏ.			1862	73
Լիլիէնթալ			1804	3
Համիլթոն կոլ			1862	77
Մարսիլիա			1861	64
Փարիզ			1855	34
ԲԻԼԲ			1861	58
Փարիզ			1858	54
Փարիզ			1860	59
ԲԻԼԲ			1855	43
Փարիզ			1861	71
Փարիզ			1856	38
ԲԻԼԲ			1855	36

Մանր մուր. ման են գալիս:	Սրևու մն:	Շղանակը օր	Ո՞վ է գտել:
Նիորա	4	210	Լուտեր
Պանդորա	4	214	Սերլէ
Ցերերա	4	219	Փիացցի
Պալլադա	4	222	Ուրբա
Լեօնցիա	4	223	Շաքորնակ
Գալատեա	4	231	Թէմպէլ
Բէլլոնա	4	231	Լուտեր
Պոլիգիմնիա	4	318	Շաքորնակ
Սզլայա	4	326	Լուտեր
Կալիսոպա	4	352	Գլինդ
Պսիխէա	5	2	Գասպարիա
Հեսպերիա	5	67	Սըխախարէլի
Գանայա	5	76	Գոլդշմիդ
Լեկոթէա	5	77	Լուտեր
Պալէս	5	148	Գոլդշմիդ
Եւրոպա	5	167	Գոլդշմիդ
Գորիդա	5	176	Գոլդշմիդ
Երատա	5	197	Ֆերսլիէր և

Հարստ
Ինքն

Գրք
Հրատ

Ուր է
գտել:

ԲԻԼԲ	1861	71
ՍԼԲանի	1858	53
Պաշերմո	1801	1
Բրեմէն	1802	2
Փարիզ	1856	39
Մարսիլիա	1862	74
ԲԻԼԲ	1854	28
Փարիզ	1854	33
ԲԻԼԲ	1857	47
Լոնդոն	1852	22
Նեապոլ	1852	16
Միլան	1861	69
Փարիզ	1860	61
ԲԻԼԲ	1853	33
Փարիզ	1857	49
Փարիզ	1858	52
Փարիզ	1857	48
Բեռլին	1860	62

Ո՛ւր է գտնուի	Գր համար	Հասցե համար
------------------	-------------	----------------

Բերլին	1860	62
Նիսպոլ	1853	24
Նիսպոլ	1849	10
Վաշինգթոն	1854	31
ԲՆԼԲ	1859	37
Կոստանդուպոլիս	1862	76
Մոսկովա	1861	63

Այս եօթանասուն և ութ մանր մոլորակները, որ հին ժամանակներումը նշմարուած ևս չէին, և 1801 թուէն սկսան քիչ քիչ յայտնուիլ, քանի որ գիտակները (դիւրբին) կատարելագործուեցան, այնքան աւելի սկսան շուտ շուտ երևիլ: Չորօրինակ. 1801 թիւէն մինչև 1833 Սպրիլի 6 այս մոլորակներէն դանուել էին միայն 32, որոց հետ կային 24 էլ աստերոյիդք: Իսկ այս յետին 10 տարուան մէջ՝ մոլորակներու թիւը հասաւ 78: Այս մոլորակները իւրեանց շրջանները կատարում են իրանց ստոյգ հաշուած ժամանակով Հրատ ու Լուսինի թաղ մոլորակներու մէջ:

Ո՞րքան միսիթարու թիւն է մարդուս համար, մարդկային լուսաօրու թիւնը ո՞րքան յառաջագիմու թիւն է արեւ և անում: Եթէ աստեղարաշխութիւնը այնքան առաջացել է, այնքան արգասիք ունի, միւս գիտութիւնները ո՞րքան են առաջ գնացել. ո՞վ կարելի զուով պատմել: Մրդեօք ի՞նչպէս մարդիկ են այն մարդիկը, որ գիշեր

ցերեկ իրանց կեանքը այն գիտութեան
 ծաղկեցնելուն նու իրելով, աչքերը դի-
 տակին դրած, գիտակն-էլ գէպ ի եր-
 կինքի անհուն հեռաւորութիւնը ուղ-
 ղած՝ զննում են աստղերու ընթացքը,
 համրում են, խմանում են, որ այս
 աստղը այսքան տարումը և այսքան
 օրվան մ.ջ է աւարտում իւր ընթաց-
 քը արեգական շրջա պտոյտը, միւս
 աստղը՝ այսքան ժամանակումը: Եւ
 ո՞րքան զարմանալի դիպում է, որ
 մի և նոյն աստղի վրայ երկու աստե-
 ղաբաշխք զանազան կէտերից են մտիկ
 անում, և մի և նոյն մակաբերութիւնն
 են դուրս բերում:

1801 թուին Փիացցի աստեղաբաշ-
 խը գտաւ մէկ հատ մոլորակ, որոյ
 անունը դրեց Յերերա, Պալերմոյ Սի-
 կիլիայ կղզու մայրաքաղաքումը: Կա-
 բելի է թէ՛ այն ժամանակ նորա գիւտի
 վրայ ծիծաղեցան, և իրան-էլ շառ-
 լաթան անուն շնորհեցին: Այս նոր
 տարի օրն էր: Սա իմացաւ որ Յե-
 բերա մոլորակը 4 տարի և 219 օր
 է իւր ընթացքը կատարում:

1802 թուին, Մարտի 28, մեկ տարի երեք ամիս յետ Ցերեբայի յայտնուելից, Ուրերս աստեղարաչխը Քրեմէն Գերմանիոյ ազատ քաղաքումը գտաւ Պալլադա մոլորակը, որ 4 տարի 224 օրումն է իւր ընթացքը լրացնում:

1803 անց կացաւ դատարկ, ոչինչ յայտնութիւն չեղաւ, դործիքը անյարմար էին, կամ զբաղմունքը աւելի էին: Ս յն տարիները Նապոլէոն Բոնապարտէի Եւրոպայի մ, ջ մ ծ մ ծ բաներ առաջացնելու ժամանակներն էին, զարմանք չէր, որ աստեղարաչխը էլ՝ երկիրքը թողած՝ երկրի վրայ պատահած բաներուն տուած լինէին իրանց խելքումիտքը: Ս յսպէս անցան անպտուղ մօտ 16 ամիս:

1804 թուին Լիլիէնթալ քաղաքումը Հարդինգ աստեղարաչխը Սեպտեմբերի 1 գտաւ Իւնոնա մոլորակը, որ 4 տարի և 133 օր էր արեգակի շուրս կողմը պտոյտ գալիս: Երբ թէ տասնուհինգ ամիսը մեկ գիւտ էր լինում: Գիտութիւնը նոր սոք ելլած

երեխի պէս էր առաջ գնում: Բայց այն էլ կարեցաւ. 2 տարի 8 ամիս դարեցան աստեղաբաշխները:

1807 Մարտի 29, Ուրերս Պալլադայի գտնողը էլի Բրեմն աստեղաբաշխումը գտաւ Աւստրա աստղը: Այս վերջինն էր: Աստեղաբաշխութեան վրայ մէկ վարագոյր ծածկուեցաւ, կամ երկինքը ազահացաւ, կամ դիտակները փոշոտեցան. 38 տարի աստեղաբաշխք երեւի՝ ո՛չ թէ միայն աչքերուն դիտակ չդրին, այլև ինչպէս երևում է՝ քնթերէն էլ շէշմակը (ակնոց) հանել դէն էին գձել, որ ոչինչ չէին նշմարում:

Հասաւ 1843 թիւը: Դեկտեմբերի 8 ին Դրիդէն քաղաքումը շէնկէ աստեղաբաշխը գտաւ նոր մոլորակներից հինգերորդը, և անունը դրեց Սատրէա:

1847 թու ին երեք հաս մոլորակ գտնուեցան: 1) Յուլիսի 1, Դրիդէն քաղաքումը՝ վերոյիշեալ շէնկէ՝ Սատրէայի գտնող աստեղաբաշխը գտաւ Հերա մոլորակը: 2) Օգոստոսի 13, Լոնդոն քաղաքումը՝ Գինդ աստեղա-

քաշխը գտաւ Իրիս, կամ Իրիդա աստ-
ղը: 3) Հոկտեմբերի 18 էլի նոյն
Գինդը գտաւ Փլորա մոլորակը:

1848 Սպրիլի 26 Մարկրի կասթը
քաղաքումը՝ Գրագամ աստեղաբաշխը
յայտնեց Մէտիդա կամ Մէդիս մոլո-
րակը:

1849 Սպրիլի 12: Նէապօլիս քա-
ղաքումը Գասպարիս աստեղաբաշխը
գտաւ Գիւզէա աստղը:

1850 Թուին էլի երեք մոլորակ
գտան: 1) Մայիսի 11 Գասպարիսը
գտաւ Պարթէնոպա: 2) Սեպտեմբերի
13 Գինդը գտաւ Աիկտորիս աստղը:
3) Նոյեմբերի 2 էլի Գասպարիսը
Եդերիս աստղը, միշտ Նէապօլիս
քաղաքումը:

1851 Թիւը մնաց միայն երկու նո-
րադիւտ մոլորակներով, որոց մէկը
գտաւ Գինդը Լոնդոնումը Մայիսի 19.
միւսը՝ Գասպարիսը Նէապօլումը Յու-
լիսի 29:

1852 Թուին Շաքորնակ աստեղա-
բաշխը հանդիսացաւ Նորա առաջին
գիւտը եղաւ Մասսալիս աստղը, որ
Գասպարիսի հետ միասին տեսաւ,

նա՝ Նեապօլէն, սա՝ Մարսիլիայէն.
 Բայց այս արուեցաւ Գասպարիսին:
 Իսկ 1853 Շաքորնակ դտաւ Սպ-
 րիլի 6, Փոկէա աստղը, յետոյ 1854
 Պոլիգիմնիա աստղը Փարէզ քաղա-
 քումը. 1855 Կիբկէա մոլորակը: 1856
 ին Լեդա աստղը, և Լեաիցիա մոլո-
 րակը: 1860 Ուիմպիա աստղը: Չորս
 տարւան մէջ Շաքորնակ Փարէզ քա-
 ղաքումը դտաւ վեց կամ եօթն մոլո-
 րակ:

1852 թուին Փարէզ քաղաքումը
 Շաքորնակի ժամանակակից Գօլդ-
 շմիդ թ աստեղաբաշխն էլ հանդիսա-
 ցաւ, նա էլ մինչև այսօր ունի դտած
 տասնուչորս մոլորակ՝ համարեա այս
 վերջին տասը տարւան մէջ:

Գինդ աստեղաբաշխը Լոնդոնումը
 գտել է մինչև 10 մոլորակ: Եօթը
 մոլորակ էլ Գասպարիս է գտել:
 Տասներկու մոլորակ էլ Լուտեր է գտել
 Բիլբ քաղաքումը:

Երբ որ մարդիկ դեռ երկինքումը
 միայն եօթը մոլորակ էին ճանաչում,
 երկրումն էլ միայն եօթն հրահալե-
 լիք էին տեսնում, և շարաթի եօթն

օրը նոյն եօթը հրահալելեաց հետ
 միասին համարում էին իրանց գիտե-
 ցած եօթն մուրաբաներու իշխանութեան
 տակ: Այս մէկ այնպէս մտախաբու-
 թիւն էր, որ ո՛չ թէ միայն մարդոց
 աչքն էր քողարկում, որ շտեմենն ճշ-
 մարտութիւնը, այլև աստեղաբաշխու-
 թեան գրական գիտութիւնը աղաւա-
 դում էր աստղահամայնութեան ծաղրե-
 լի առասպելներով, և տանում էր
 մարդու միտքը այն Լալպիւրին-
 թոս, ուր որ աներեցթ հոգիները,
 դէերը, այսերը, հուրիները, փերի-
 ները, ալբերը, մեղմ աղեկները
 մարդոց հետ զանազան աննշակցու-
 թիւններ էին սարքում, և հին ժա-
 մանակի աստուածներու, քաջերու,
 յուշկապարիկներու, առլեղներու նման
 հանձարի գէմ պատնէշներ էին բար-
 ձրացնում:

Հաս ժամանակ թագաւորեց աշ-
 խարքի երեսին այս մուրաբութիւնը:
 Մարդկային միտքը սորա ծանրատոյաղ-
 տուկ շղթաներէն ազատուիլ ցան-
 կալով՝ աշխարքի խուժանի մէջէն դուրս
 հրաւիրեց Լոբբեր, Հումբոլթներ,

Գեկարաներ, Լապլաններ, և ուրիշ
 գործակներ, որ այն պատնէշը խրա-
 մատեն: Բնու թեան զննու թիւնը դա-
 աա սակի բանալի պղնձի աշտարակը
 մանելու, և մարդուս գերեալ միտքը
 հանելու համար: Ստուգարաշխները մո-
 լորակաց թիւը շատացնելով, և բնազը-
 նինք հրահալելեաց անասկը աւելացնե-
 լով՝ ցոյց տուին մարդուն թէ ո՞րքան
 է մոլորուած եւ թէ մոլորակներու շա-
 լիղներով, միտքը ստացաւ իւր ազա-
 տու թիւնը, և գիտութիւնը սկսաւ ճշ-
 մարտութեան երեսէն խլել այն թանձր
 վարագոյրը, որով որ ծածկված էր
 այնքան ժամանակ: Մարդ ոտքը դրեց
 իւր իրաւանց մէջ, ազատվեցաւ ճմա-
 կային խաւարէն, և դարաւ խակապէս
 որդի լուսոյ և որդի տունջեան:

Բայց այս ասելով՝ դիտաւ որու-
 թիւնս այն չէ, որ ցոյց տամ թէ՛ բո-
 լոր հին բաները ոչինչ են և խտու-
 չի: Ոչ: Իրանք մտք աստեղարաշխք
 էլ հին բաներէն շատը պահում են,
 և չեն կարողանում փոխել և չեն էլ
 կամենում, և հարկաւոր էլ չէ փոխե-
 լը: Ինչ կայ քան զարեգակն, կամ

քան զլուսինը, կամ քան զերկիրը հին: Սասնդարադիք շին ասում՝ թէ արեգակը՝ արեգակ չէ. կամ երկիրը՝ երկիր չէ:

ՍՅԼ նոցա ասածը այսպէս է հասկացվում: Սասնոց արարածքը այնքան անթիւ, անհուն, անհաս են, որ ո՞վ գիտէ՝ թէ երկինքի ամենատարած ընդարձակութեան մէջ քանի միլլիոն արեգակունք կան, որ մենք չենք տեսնում, և մեր ունեցած դիտակներու և դործիքներու անկատարութիւնը չէ ներու՛մ մեզ նշմարել: Նոյնպէս ո՞վ գիտէ թէ մեր ծանօթ մոլորակները ի՞նչ են: Զորօրինակ ի՞նչ է ինքը արեգակը. Եկեղեցւոյ ասածի նման, լոյս պայծառ յօր շորթօրդի՞ն յարեգական նիւթ հաւաքեալ, թէ հուր, և թէ այլ ինչ զօրութիւն, որ իւր ամենարագ թաւալմամբ այսքան աշխարքներ, այսքան մոլորակներ, այսքան արեգակնանման աստղեր, իւր թափով իւր շորս կողմը պտտեցնում է: Թող գիտունք այս խնդիրի վրայ տքնին. նոցա տուած վճիռները դեռ կանուխ է այս նեղ շրջանակի մէջ զե-

տեղել: Միայն այս տեղ մենք այն պի-
տի նայինք, որ մեր հին նախնիքը ի՞նչ
հնար են գտել, որ աստեղաբաշխու-
թիւնը կարողացել են այն ժամանակ-
վան աղքատ հնարներով մշտնջենա-
ւորել, և մինչ-ի մեր ժամանակները
հասցնել: Մեզ շատ մեծ պարծանք չէ
որ մենք մեր նախնեաց ձեռքերէն ըս-
տացել ենք պատրաստ աստեղաբաշ-
խութիւն: Պարծանքը նրանցն է, որ
հնարել են այս դիտութիւնը, և երբ
ո՛չ գիրն էր այսպէս հասարակեալ, ո՛չ
թուղթ ունէին և ո՛չ դիտակ (տիր-
պին,) և ո՛չ տպագրութիւն գիտէին,
կարողացել են աստեղծել աստեղաբաշ-
խութիւնը, կարգի ու սահմանի հը-
պատակեցնել և ինչպէս մէկ արուեստ
ապագայից յետնոց աւանդել:

Միայն երկինքին նայելով, աստղերը
նշմարելով մարդ չի՛ դառնար աստե-
ղաբաշխ: Նա առաջ պիտի ունենայ
սուր աչք. յետոյ սուր երևակայութիւն
և սուր միտք, որ մէկ անդամ աեսած
ու նշան դրած աստղը միւս անդամ-էլ
որ տեսնէ, ճանչնայ: Հարկաւոր էր
անուաներ դնել աստղերուն, հարկաւոր

էր ասողերու ընթացքը զննել: Տեսան
որ այնպէս ասողեր կան, որ արեւելքէն
դէպ-ի արեւմուտք են գնում, այնպէս-
ներն-էլ կան: որ արեւմուտքէն դէպ-ի
արեւելք են գնում: Այսն այնպէսները
որ բազմութեամբ են ման գալիս, կան
այնպէսները՝ որ մէնակ են պատում: Ք
Խումբերով ման-եկողներուն՝ անունը
դրին Համաստեղութիւնք, մէնակ շքր-
ջադայողներուն, որ շատի դնացած ճա-
նապարհի հակառակ էին ման-գալիս,
անուն դրին Մոլորակ:

Այս Մոլորակները աւելի խոշոր, աւելի
պայծառ լինելով, աւելի յայտնի է-
ին մարդու աչքին երևում: Համաստե-
ղութիւնները համարեալ թէ՛ նոցա նը-
ման յայտնի չէին տեսնուում: Տեսան
որ անհնար է ասողերուն առանց ան-
ունի թողնելը: Մեծներ թէպէտ և
շատ էին կարող դանել և դիտեմալ,
բայց աւելի յարմար համարեցան այն-
պիսի անուններ պալ, որ անմուսնա-
լի մնայ: Արծնէն ու Գիւցաղանց մէջէն
և նախնեաց հին պատմութենէն ընտ-
րեցին անունները: Սկսաւ Ստեղծա-
բաշխութիւնը:

Սրեղակը քան զամենը աւելի պայ-
 փառ էր: Շատ աղգեր նրան աստուա-
 ծութիւն-էլ էին ընծայում: Եղիպտոս-
 ցիք Սրեղակի անունը՝ Ռսիրիս դրին.
 Լուսինին՝ Իզիդա ասացին. և ինչպէս
 Իզիդա՝ Ռսիրիդի կնիկն էր, ազում էին
 որ Լուսինն-էլ Սրեղակի կնիկը ծան-
 շըցուի:

Յոյնք՝ Սրեղակին՝ Սպուլլան կամ Փե-
 րան էին կանչում, և Լուսինին՝ Ռիա-
 նա կամ Սնաիդ, և քոյր ու եղբայր է-
 ին համարում: Պարսիկները՝ Զինչխ
 կամ Շահ-Փիճը կոչեցին: Հայերն-էլ
 կարծում էին, որ Սրեղ իրանց Սրայ՝
 գեղեցիկ նահապետն է, (արև, արայ.)
 և Լուսինը՝ Սրայի կին՝ Նուարդն է.
 կարելի է թէ՛ այս պատճառաւ իսկ
 արեղակին՝ արև-էլ էին ասում, որ Ս-
 րայի համառօտածը կարող է հակա-
 թիւ ինչպէս-որ արեղն-էլ. և արեղակ
 Լուսնիակ՝ հարսու-մեայ էին կոչում:
 Շամս ու Լամար ասացին Բարեւացիք
 և Ստրեստանեայք և բոլոր Բաղդէ-
 այիք Սրեին և Լուսինին: Սմենեքիան
 ուզում էին որ այս լուսաւորների հետ
 մէկ աղգային յիշատակ կապակցուած

լինի, կամ մէկ կրօնական ջերմեռան-
 դու թիւն, և այսպէս քիչ քիչ մոլոր-
 ակներու գիւտերը առաջացան և ա-
 նուաները ստեղծուեցան, ամեն ազգե-
 րու մէջ՝ իրանց գիւցարանու թիւնէն:
 Արն-որ Յոյնք՝ Սասուրնոս ասին, և
 Պարսիկք՝ Չրուան, և Քաղղէացիքը
 Արիօն կամ Չօհալ, և Հռոմայեցիքը
 Կաօնոս. Հայերը անուանեցին Հայկ
 և Երեւակ (երեւի Հայկէ) Յոյնք ասին
 Դիոս, Հռոմայեցի՝ Իւպիտեր, Քաղղէ՝
 Մուշթարի, Հայերը կոչեցին Լուսրն-
 թագ, որ Հայկի կնոջ անուան են ա-
 սում: Յոյնք պատերազմի շաստուածի
 անուանով մէկ մոլորակի անունը Սրէս
 դրին, Հռոմ՝ Մարս կոչեցին, Քաղղէ՝
 Մարեխ, Հայերը Հրատ են կոչել, որ
 աւանդութիւն է թէ Սրալի անունն
 էր: Յունաց Սփրոդիտէին՝ Հռոմ՝ Վենե-
 րա ասին, Քաղ՝ Չօհրայ, Քարեւացիք
 Ստարտէ, Հայք շատ անուն ընծայե-
 ցին՝ Լուսարեր, Սրուսեակ (Հարսն)
 և Ստողիկ, և Նոյի դուստր էին Հա-
 մարում: Յունաց Հերմսին՝ որ Հռոմ՝
 Մերկուրիոս ձայնեցին և Քարեւացիք
 Օտարիա. մեր ազգի աստեղարաշխք

Փայլածու ասացին և աւանդութեամբ
կարծիք-էլ կայ թէ բանաստեղծների
խօսքով Հայկի թռան Աագմասի ա-
նունն էր: Եւ զարմանալի-էլ չէ, ո-
րովհետեւ միւս ազգաց մուրակներու
անուանց աղբիւրն-էլ, հիմքն-էլ գիւ-
ցարանութիւնն է կամ առասպելքը:
Այս տեղ թէպէտ և որպէս թէ որո-
շակի են ցոյց տուած մուրակաց ա-
նունները, սակայն գրեանց յէջ դեռ
չատ խառն են, և շատն-էլ գրած չեն:
Չորօրինակ Սրամի անունէն թէպէտ
և հանել են Սրամազդը, սակայն դեռ
որոշուած չէ Պարսից Արմիզդէն կամ
Օրոմազդէն: Բայց այսու ամենայնիւ
խրաքաքանչիւր աղգ-էլ իրան սեփա-
կան արաւ՝ մէկ-մէկ քաջերու անուն-
ներէն մուրակների վրայ դնելով, և
այս անում էին այն միտքով՝ որ մար
դիկ չըմուտանան այն իրանց աշխատան
քով դուած ու նշան դրած աստղերը:
Գիտէին որ՝ թէպէտ ճշմարիտ Ստ-
ուածը վաղ էր մուտացվել, ժամանա-
կի պաշտած սուտ շատուածներուն
շուտով չեն մոռանար: Փոյթ չըհամա-
րեցան թէ մարդիկ պիտի աստեղա-

բաշխ դառնալով աստեղապաշտ էլ
 դառնան, ժամանակաւ այն աստղերը
 աստուածայնեն, աստուած համարին,
 աստուծոյ տեղ պաշտեն. նոցա դիտու-
 լորութիւնը միայն այն էր որ աստ-
 ղերը չըմուտցովին, և աստեղաբաշխա-
 կան նորածին դիտութիւնը չըկորչի.
 և այսպէս մարդկան մտքի մէջ տղա-
 լորեցին՝ մոլորակներուն սուտ աստ-
 ուածների անուն ընծայելով:

Կարողը հասաւ Համաստեղութիւննե-
 րուն: Երբ-որ սկսան Համաստեղու-
 թիւնքը դանազանել, առաջ զանազա-
 նեցին այն աստեղաց խումբերը. որոնց
 որ կարծում էին արեգական ճանխու-
 մը շարուած: Սյս աստղախումբերին
 մէկ-քանի հատ կենդանեաց անուններ
 դնելով առաջ ասացին Կենդանակերպ,
 յետոյ նորա ուղղութիւնը ասացին Չօ
 դիակոս (կենդանակերպարան) որ արե-
 գական ցածանալու և բարձրանալու
 շաւիղն էր ցոյց տալիս: Չօդիակոսէր
 Հելլէնացոց լեզուաւ. Հայերը անուա-
 նեցին Ծիր-Կաթին կամ Ծիւ Յարդ
 գողի. և Յարդգող՝ Վահագն դիւցադ-
 նի անունն էր, և այսպէս էին մեկ-

նում: Ասհադն՝ մեծին Տիգրան Հա-
 յոց Հայկազն թագաւորի որդին մէկ
 օր դողացաւ Քարշամ բռնաւորի յար-
 դը ու փախաւ, երբ-որ Քարշամ ըն-
 կաւ յետեւն՝ յարդի դող Ասհադն չը
 դանելով երկրի վրայ փախչելու կամ
 թաքչելու սեղ եւ չըկամենալով կռի-
 ւանել, փախաւ դնաց երկինք թափթը-
 փելով այն յարդի մանրունքը, որն-որ
 այն Յարդգողի ճանփումը մանր աստ-
 ղերու նման երևում են:

Սյս կենդանակերպներից մէկ քանի-
 սի անունը Տրոյական պատերազմի եւ
 նորա նախընթաց անցքերու մէջէն են,
 զորօրինակ՝ Խոյը այն սակեղեղմն ոչ-
 խարն է, որով-որ բանաստեղծները աս-
 սում են թէ՛ մէկ ժամանակ Թեբաս
 քաղաքի Սթամաս թագաւորի որդի
 Փրիքսոսը եւ դուստր Հելլէսը ազատ-
 ուել են Մնկոելի կողմը, որոյ պայա-
 զատ Իշխանի կնիքի վրայ այժմ-էլ է
 դրոշմած սակեղեղմն խոյը, որ դիւցազն
 Յասոնը զողքիսէն յափշտակում է:
 Յուըն այն է, որ մէկ ժամանակ Աու-
 փորոնէն մէկ հաս դողացած աղջիկ
 վրէն նստեցրած փախցրուց:

Երկաւորը՝ էին Տինդար Թագաւորի
երկուորեակ սրգիքը Վաստոր և Պու-
լուքս, որ իրանց քրոջ Հեղինէի յա-
փշտակող Պարիս արքայորդույ յետե-
ւէն նաւակով վազած ժամանակը՝ ծո-
վումն ընկղմեցան:

Խեցղեալին այն խեցեմորթն է, որ երբ
Հերակլէս դիւցազնը Հիդրայ ջրային
վիշապի դէմ կռիւ էր անում, նա-եւ
եկաւ Հիդրային օգնութիւն և վախե-
ցնուց այն հսկային, և այս պատճառաւ
ասուեցաւ թէ՛ և ո՛չ Հերակլէս ընդ-
դէմ երկուց:

Սախճը այն էր, որ Հերակլէս սպա-
նել էր Նեմեսայ անտառումն և նորա
մորթին միշտ վրէն գձած էր շըրջա-
գայում:

Այսը այն նորանշան աղջիկն էր, որ
մէկ-օր ձիթենիի սառ ձեռին բանած
երևեցաւ Ստոիկէի մայրաքաղաքումն
երբ-որ Թեսէոս դիւցազնը քաղաք էր
չինում, և նորա անունով այն նորա-
շէն քաղաքն-եւ կոչուեցաւ Սթէնք.
որովհետեւ կարծեցին թէ Սթէնաս.
չաստուածուհին էր այն աղջիկը:

Սղեզնաւորը այն ձիամարդ Քիրոնն էր

որ Հերակլէսի հարանացուն յափըշ-
 տակել էր, Հերակլէս հառաւ և յե-
 տեէն նետով հասցուց ու սպանեց:
 Այժեղջիւրն-էլ այն է որ՝ երբ Պրո-
 մեթէոսը մէկ դեղեցիկ աղջիկ հնա-
 բեց անունը Պանդորա (ամենապար-
 գեւ), շատուածն երբ նախանձելով մէկ
 եղջիւր (կոտորչ) տուին ձեռք, որ աս-
 վում էր Սմալֆէա, Մաղթեղջիւր, Եղ-
 ջիւր առատութեան: Պանդորա անդ-
 դոյշ բացեց եղջիւրի բերանը և իսկոյն
 դուրս թափուեցան շարն-ու-բարին և
 աշխարքի երեսին փռուեցան, և այն
 բաղդաւոր այժը որ կրել էր այն հրա-
 շալի եղջիւրը, ասուեցաւ Այժեղջիւր:
 Այսպէս Աշխն-էլ, Կարիճն-էլ, Զր-
 հոսն-էլ, Զուկն-էլ՝ Յունաց առաս-
 պելարանութիւններէն քաղած անուն-
 ներ են, որն-որ դրել են կենդանա-
 կերպներու համաստեղութեանց վրայ:
 Եւ ինչ զարմանք է՝ որ հիները այս
 պէս արած լինին, երբ-որ նորերն-էլ
 նոյն ճանխով են դնում, ահա՛ բոլոր
 նորագիւտ մոլորակներու մէջէն մէկ-
 քանի հասնու են միայն նոր մարդոց և
 նոր անոցներու անունով, (ինչպէս՝ Աիկ

տորիս որ այժմեան Մնգլիոյ թագու-
 Տու անունն է,) մնացեալները ըստ մե-
 ծի մասին, կամ լաւ ևս խապառ. հին
 դիւցարանու թեան մէջէն է. բոլորն-էլ
 Յունաց հին շատուածքն են և շատ-
 ուածուհիքը, և կամ դիւցազունք և
 դիւցազնուհիք, որն-որ պատմու թիւնը
 ցոյց է տալիս յայտնապէս:

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՐՈՒԹԻՒՆ

Ըստ հաշուի Պատմու թեան Հայոց:

Տարիք Քրիստոսի ծնունդէն առաջ:

2935: Նոյ բնակուեցաւ Արարատուճր:

2412: Բաբելոնի աշտարակը և դիւտե-
 րու, արուեստից, դիտու թեանց
 և աստեղաբաշխու թեան սկիզբն

2346: Հայկ նահապետը հիմնեց Մեծ
 Հայքը (✠)

(✠) Խաչանիչն ցոյց է տալիս որ՝ այն
 դիւցազին վերայ կայ բանաստեղծու-
 թիւն Վարդանի ու Շաւարշի նման:

- 2164: Արմաւիր շինուեցաւ:
- 1917: Աբրահամ ընդունեց Միաստուածական կրօնը:
- 1908: Մեզքիսեղեկ նորոգեց Երուսաղէ:
- 1827: Արամ Հայաստանի վերայ աւելացուց Փոքր-Հայքը (✠)
- 1733: Արայ գեղեցիկը մեռաւ (✠)
- 1744: Յակոբ փախաւ Միջագետք (✠)
- 1742: Շամիրամ շինեց Վան քաղաքը
- 1725: Մուշտան հանձարեղ նորոգեց Հայաստանը (✠)
- 1724: Յովսէփ գեղեցիկին իւր եղբարք վաճառեցին Եգիպտոս:
- 1662: Պարեո Հայկազն (✠)
- 1600: Յոր ծաղկեցաւ (✠)
- 1568: Չաւան Հայկազն (✠)
- 1567: Մոսէս մարգարէն ծնաւ:
- 1531: Փառնակ Ս Հայկազն (✠)
- 1604: Տրոյացոյ թագաւորութ' սկիզբն:
- 1487: Իսրայէ' Եգիպտո' ազատուեցան:
- 1478: Սուր Հայկազն (✠)
- 1467: Յեառ մտաւ Սեւանաց երկիր:
- 1443: Քանանեանք եկան Պալեստինէն Հայաստան:
- 1403: Վաշտակ Հայկազն (✠)
- 1490: Օրբէլեանք եկան Չինաստանէն:

- 1381: Հայկակ Ս Հայկազն(✠)
 1289: Կար Հայկազն(✠)
 1280: Գոռակ Հայկազն(✠)
 1254: Սթէնք քաղաքը շինուեցաւ:
 1244: Բիւզանդիոն քաղաքը շինուեցաւ:
 1210: Որփէոս բանաստեղծ:
 1207: Հերակլէս դիւցազն Յունացի:
 1206: Սրդանա որդ ք առին անկեղեղմն:
 1197: Լասինոս թագաւորեցԻստալիում:
 1194: Ջարմայր Հայկազն(✠)
 1180: Տրոյիա անուեցաւ:
 Էւաւրչ Բ Հայկազն(✠)
 1170: Փարէզ քաղաքը շինուեցաւ:
 1150: Սամիսոն և Սամուէլ:
 1051: Գաւիթ մարգարէն թագաւոր:
 1000: Սողոմոն իմաստունը Երուսաղէ
 մի տաճարը շինեց:
 749: Հռոմուլոս շինեց Հռոմ քաղաքը:
 746: Պարոյր դաշաւ առաջին պրսա-
 կաւոր թագաւոր Հայկազանց:
 710: Նումայ Պոմպիլիոս նորոգեց Հը-
 ռոմայեցոց տոմարը:
 705: Սրճբունիք Ստրեատանէն և կան:
 700: Հրաչեայ չքնաղ Հայկազն(✠)
 594: Հայկակ Բ Երուսաղէմէն բերեց
 Բագրատունեաց զեղը:

- 369: Երեան շինուեցաւ Երուանդէն:
 367: Սրտիմէդ նորոգեց Վարդղէսը:
 334: Տիգրան Երուանդեանը՝ Մեծ և
 Փոքր Հայաստանի վրայ աւելա-
 ցրուց Միջագետքը:
 620: Վահագն դիւցազն Հայոց (✠)
 312: Յունիս Բրուանու Հռոմեց թագա-
 ւորու թիւնը արաւ Հասարակա-
 պետութիւն:
 318: Սէքսանդր Մակեդոնացիէ կոր-
 ծանեց Հայկազանց աւերութիւնը:
 149: Վազարշակ Պարթև առաջին Սր-
 շակունի թագաւոր Հայոց լայ-
 նացուց Հայաստանի սահմանքը:
 89: Տիգրան յաղթողը ընդարձակեց
 Հայաստանը Վասպից ծովէն մինչ
 և Պոնտոս և Վովկատէն մինչ-և Մի-
 ջերկրեոյ ծով և Պարսպոսին:
 40: Յուլիոս Ասար յօրինեց Յուլի-
 անեան տոմարն, այսինքն հրա-
 մայեց որ տարին համրվի 365
 օր ու 6 ժամ:
 36: Հայերն առին Երուսաղէմը, դե-
 րեցին Հիւրկանոս թագաւորին:
 35: Հռոմեացիէք մտան Հայաստան:
 16: Սրգար Օգոստոս կայսրի օրերն:

Տարեք Քրիստոսի ծնունդէն յետ :

1: ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ծնաւ :

32: Ս ր Դ ա ր Հաւատաց և անաղա
Քրիստոսի նամակը և անձեռա-
դործ դաստառակը :

33: Թաղէոս առաք'՝ եկաւ Հայաստան
Գեղարդն բերեց և Հայոց եկե-
ղեցին և Հայրդեառութիւնը հիմ-
նադրեց :

49: Բարթողիմէոս առաք'՝ Ստուա-
ծածնի սքանչելագործ պատկերը
բերեց Հայաստան :

120: Սմատուռիք եկան Համարանէն :

197: Վաղարշապատ շինուեցաւ Վարդ-
գէտի նորոգած Սրտի Ս. Գի տեղը :

267: Սուրբ Լուսաւորիչ ծնաւ Հայաս

286: Տրդատ Թագաւորեց :

186: Մամեկոնեանք եկան Չինաստանէ

301: Հռ. խիսիմեանը նահատակուեցան
և Հայաստան լուսաւորուեցաւ :

302: Լուսաւորիչ հայրապետ դառաւ :

303: Սուրբ Էջմիածին շինուեցաւ :

321: Կամսարականք եկան Հայաստան

329: Կոնստանտինոպոլիս շինուեցաւ :

406: Մեսրոպեան առաւորը կազմեց :

- 428: Սրշակունեաց Հայոց Թագաւորութիւնը վերջացաւ:
- 431: Վարդան Մաթիոնեան նահատ:
- 489: Քաջն Վահան Մաթիոնեան ազատեց Հայաստանը:
- 499: Տփխիս քաղաքը շինուեցաւ:
- 551: Մուէս կաթողիկոսը նորոգեց Հայոց տունաբն:
- 604: Մաշեղ և Գայլ-Վահան Մամիկան՝ ազատեցին Մշու երկիրը:
- 885: Աշոտ Ս Բագրատունին նորոգեց Հայոց Թագաւորութիւնը:
- 908: Գաղիկ Տիմեոսեց Սրժբունեաց Թագաւորութիւնը:
- 909: Բագրատունիք Թագաւոր նստան Վրաստանում:
- 961: Աշոտ Աղսրմաճ Մեծ քաղաքը արաւ արժուանիստ Հայոց:
- 1019: Պետրոս գետադարձ կաթողիկոս
- 1045: Բագրատունեաց Հայոց Թագաւորութիւնը վերջացաւ:
- 1080: Ռուբեն Հայկազն Տիմեոսեց Վիլիկիայումն Հայոց նոր անկախութիւն Ռուբենեանց:
- 1098: Գեղարդը յայտնուեցաւ Մնտիօք մայրաքաղաքումն:

- 1198: Լէոն Բ նորոգեց Հայոց թագաւորութիւնը Վիլիկիայումը:
- 1270: Գիտակը հնարեցին Ռամէր Բեկըն և Գալիլէոս:
- 1300: Թղթաշինու թիւնը Եւրոպացիք սովորեցան արևելքումը:
- 1302: Կողմնացոյցը հնարեց Ֆլախու Ճիօխա:
- 1329: Վառօղը հնարեց Շվարց գերմանացին ֆրէյբուրգ քաղաք:
- 1375: Հայոց Վիլիկեցոց թագաւորութիւնը վերջացուցին Նդիպասաց:
- 1379: Ռամբադորժին հնարեցին Գաղղիացիք Սուգսբուրգումը:
- 1380: Ջէյթուենցի Հայոց Հասարակապետութեան սկիզբն:
- 1449: Տպագրութիւնը հնարեց Գութէնբերգ Մայինց քաղաքումը:
- 1492: Քրիստափոր Կոլումբոս Գենովացին գտաւ Սևրիկա նոր աշխ:
- 1560: Մնաւոր ժամացոյցը օր դեռ 900 ամի հնարելէր Հերբերթ Մագդէրուրգ քաղաքումը, ծոցի յարմարեցուց Գեարոս Հելայ Նիւրենբերգ քաղաքումը:

- 1567: Հայոց ապագրութիւնը ըս-
կաւ Արղար Պօլխումը:
- 1600: Հայք սկսան բնականալ Ռու-
սաստանումը:
- 1603: Շահ-Աբրահը Հայերուն քը-
շեց դէպ-ի Պարսկաստան(✠)
- 1627: Նիկոլի աղմուկը Լեհաստան:
- 1690: Շոգենաւը հնարեց Մնդլիա-
ցի Զեմն Ուսմիքը
- 1709: Սաաջին Սաաջնորդա թիւն Հա-
յոց և առաջին քարաշէն եկե-
ղեցիւն Ռուսաստանի մէջ Հաշ-
տարխանումը Մեծին Պետրուի
հրովարտակով:
- 1726: Դաւ իմ-Բեդը զօրացաւ (✠)
և Ղարաբաղի քաջ Մեղիքնե-
րի հետ միարան ազապեց Սիւ-
նեաց երկիրը և նրանիւ և նո-
քա զօրովարնեքէն են առաջա-
ցած այն ազգատոհմերը, որոնք
որ այժմ կան ըստ մեծի մա-
սին Ղարաբաղ, Թիֆլիզ, Հաշ-
տարխան, Աղլար, Մօղղոկ, Հին-
ու Նոր Նախիջևան, Երևան և
միւս հայարնակ քաղաքներումը:

- 1767: Հոգենաւը հնարեց Ռորերթ
Ֆուլտոն Պարեզ քաղաքումը:
- 1773: Մարմնայ պատու ատոր հընա-
րեց Եղուարդ Ժէննէր:
- 1779: ՆորՆախիջեանը հիմնվեցաւ:
- 1780: Օղապարիկ դունտը հնարեց
Մանգուլֆիէր Ֆրանսիացին:
1793. Թիֆլիզը քանդեցին Պարսիկք:
- 1800: Արաստանը հպատակեցաւ
Ռուսաց Տէրութեան:
- 1802: Ախաղբութիւնը հնարեց Ս-
լնա Չէննէֆէլդեր:
- 1802: Կայծակնաձերտ կաղմութիւնը
հնարեց Բենիամին Ֆրանկլին:
- 1823: Սուրբ Էջիածին ազատեցաւ:
- 1840: Լուսանկարը հնարեց Դալքեր:
- 1850: Ելէքտրական հեռագրութիւն
հնարեց Ռէթստոն:
- 1860: Պօլսոյ Հայոց ազգային սահ-
մանագրութիւնը հաստատվե-
ցաւ:

ՀՍՅ ՈՑ ԱԶԳԱՅԻՆ

ԳՐՕՂՍԿՆԵՐՈՒ ՆՇԱՆՔԸ

- 1) Հայկէն և Արաձէն սկսած մինչև Երուանդեան Տիգրան Հայկազն թագաւորը 1600 տարւոյ շափ ժամանակ Հայոց դրօշակներն նշանը էր Մասիս սարը և նորա վրայ Նոյեայ տապան:
- 2) Տապանի վրայ Աղանի, որ ոմանք Մասեաց Աղանի են կարծում, ոմանք էլ Շառիրամի դրօշակներից առած և Հայոց դրօշակներն վերայ աւելացրած են հասկանում:
- 3) Երուանդեան Մեծ Տիգրանէն ըսկսած մինչև Արշակունեաց թագաւորելը էր Եօթնագլուխ վիշապ, ի յիշատակ այն մեծ մեծ յաղթութեանց, որով զօրացաւ Սժգահակի Եօթնապատիկ աւելի մեծ բազմութեան և Մարայ ինքնակալութեան վրայ:
- 4) Վաղարշակ Ս Պարթևից սկսած մինչև Արգար, Հայաստանի Արշակունի թագաւորաց դրօշակի վերայ Արծիւ էր վնում նկարած:
- 5) Արգար իւր դրօշակի վերայ դրեց

Քրիստոսի անձեռագործ Գառառակի
պատկերը:

6) Տրդատ դրեց Գառն, Արդւոյն Սա-
տուծոյ օրինակ, և այս անցքի յիշա-
տակ հիմնեց Գառնի քաղաքը: Եւ այս
Գառը մնաց Մարդպանների և Ոստի-
կանների ժամանակը, և Քաղրատուն-
եաց Թագաւորութեան օրերն էլ, և
Ոստրենեանց իշխանապետութեան մի-
ջոցումն էլ: Կարելի է համարձակել
կարծել, որ Քիւրդերի Ս.Ջ. Սխ Ղո-
խնլու կամ Խարայ Ղոխնլու ազգե-
րը, որ իրանց գրօշակների վերայ նը-
շանակած սե կամ սպիտակ ոչխարների
գոյնով են զանազանվում, պահում են
անգիտակցութեամբ այն Տրդատի ա-
ւանդած Գառը, որն-որ իրանց հեա-
մասին տարան այն կիսավայրենի աղ-
գերու Ս.Ջ մեր Հայաստանի հին նա-
խարարութիւնները: Մամիկոնեանք և
Ռշտունիք, և գուցէ թէ ուրիշներն
էլ, որ նոցա Ս.Ջ անհեա կորել են,
7) Երբ-որ Ղէոն Բ թագաւոր հռչա-
կվեցաւ Վիլիկիայումն, Եւրոպացի թա-
գաւորներն երեի Քիւրդիստանի գրօ-
շակներէն բաժնելու մտքով խորհուրդ

սուին իւր անունով Սաիւծ նկարել:

այսպէս զիս ինչ որ աստիճանն էր
 ու զիս զայն յիշատակս զայն
 ու զիս զիս

ՍՈՒՍ ԵՒ ՀՍՅ ԼԵԶՈՒՍՅ

ՔՍՌՍՐՍՆ

Քիտն աղան Ուսուցչապետի

Մկրտչի Ղազարեան Բերոյեանց:

Թէպէտ այս շնաշխարհիկ երկուսիրու-

թեան համար Հիւսիս Արարիքն

իւր թերթերի մէջ արդէն քանի ան-

գամ հրատարակած ունի, լայն մենք

սեպուհ պարտաւորութիւն համարե-

ցանք այս Օրացոյց տեւրակի սպասա-

ւորութեամբ ևս խրախուսել Սղղասէր

Հայրենակցաց, որ այն Հայոց բարբա-

ռի անդամուանի մէջ անխանջ և բերա-

նավաստակ արդիւնարար մշակի աշ-

խատանքն ջանք անեն արժանապէս

գնահատել, մտքերի մէջ հաստատ

գրոշակով, որ այն բառարանն՝ իւր
 այժմեան վիճակի մէջ՝ ոչ ունի զուգա-
 հաւասար իրան և ոչ-էլ գոնէ մեր օ-
 րերումն սխաի ունենայ, թէ ճշդու-
 թեան կողմանէ, թէ հարստութեան
 և թէ անձանձիր ջանագրութեան ան-
 վրէպ, որքան հնար է՝ ուղղութեան
 մասին, և հեղինակի բարեխիղճ աշխա-
 տանացարգասիքն է, ամեն հանգաման-
 քներով առաջվանէ սրարիւր զննութե-
 կամբ մշակած և սիրական ազգի հա-
 մար անզուգակշիռ և անխիտարինս լի
 պարզ և պարաստած:

Մեներելի է մեր ճօխ և փարթամ մե-
 ծատանոյ՝ այնպիսի ջանկալի գանձի ան-
 յայտ մնալն թաղուած թաքնութեան
 ազարակի մէջ: Նա մէկ այնպիսի ճը-
 րագ է, որ սխաի ամեն ազգասէր Հայ
 ջանայ հանել գրուանի տակէն և դը-
 նել աշտանակի վերայ, որ նրա լու-
 սէն շահվին, գուտ քաղեն թէ վար-
 ժարաններն, թէ աշակերտներն, թէ
 վարժապետներն և թէ առ հասարակ
 ամեն բանասէր Հայ, ով որ փափագ և
 սէր ունի Բուսաստանի բարբառին հը-
 մուտ և տեղեակ գոնովիլ:

Որ աղբիւրի մօտ-էլ որ վազես, չես
կարող ծարազ այնպէս զովացնել, ե-
թէ ցանկութիւնդ՝ Հայոց և Ռուսաց
լեզուագիտութեամբ՝ անվթար թար-
գմանութիւնն է, ինչպէս-որ այս Բա-
նարանն է կարող քո սրտքեալ շըր-
թան տամիութիւն ընձեռել:

Սյժման մրազգի մեծատանց մեծ
յանցանք պիտի համարուի, եթէ ի-
րանց զաւակաց, իրանց յեանորդաց և
ապաղայ ազգաւոհ՝ Սի համար այս ան-
զուգակշիռ ճոխութիւնը շրթողնեն
ժառանգութիւն: Սյժմ՝ ամեն տեղ
մեր ազգը ձկտում է դէպ-ի յառաջա-
դիմութիւն: Միլիոնաւոր Հայ բազ-
մութիւնը՝ որ բնակուած է Ռուսաս-
տանի հովանաւորութեան տակ, թէ
մայրաքաղաքներումը և թէ Ստորա-
խան, Ազլար, Մօզղօկ, Ստաւրապօլ,
Ալադիկաւկաս, Նոր-Նախիջևան, Խը-
րիմու Էրկրումը, Գրիգորիպօլ, Բեսա-
րարիա, և Կովկասու լերանց միւս Է-
րեւին՝ Թիֆլիզ, Երևան, Աաղարշա-
պատ, Գանձակ, Շուշի, Շամախի,
Բաքու, Գարրանդ, Աուրայ և այլն,
պարտաւոր են ծանօթանալ տանուտի

րական բարրաւին, և թէ կամենում
 են լաւ ծանօթանալ, հմուտ թեամբ
 տեղեկանալ, և համանդամայն իրանց
 մայրենի լեզուի բնքոյշ և քաղցրիկ
 յատկութիւնները անխախտ և ազատ
 ապահովել թէ ուսարանութեան և
 թէ ուրիշ խառնահանջիւն նորարար-
 բաւ աղղկցութիւնից, անշուշտ պիտի
 իրանց առաջնորդ օտանան այս Բա-
 ռարանը, որ Ռուսաց և Հայոց լեզու-
 ների ամեն ծածուկ և յայտնի հան-
 դամանքները, որքան որ մտնում են նո-
 րա շրջանակի մէջ՝ լուսարանելով ա-
 լանդում է աննախանձօրար:

Սյս Բարարանի տպագրութեան
 մասին ով-որ բարեհաճութիւն ունին
 րանազնցութիւն անել, կարող է նա-
 մակակցութիւն անել Հիւսիս լըրա-
 գրի հրատարակչի Ռաֆայէլ
 Պատկանեանի հետ:

Ս Մ Ի Ս Ն Ե Ր Ը , Կ Ս Ղ Ս Ն -
Գ Ը , Հ Ի Ն Ո Ի Ն Ո Ր
Տ Ո Մ Ս Ր Ը :

Տարին՝ 12 ամիս և 363 օր բաժանելը, (շատ տեսակ կարծիքների հետ այս կարծիքն-էլ կայ՝ թէ) Բարխլոնումը քաղաքացիք էին հնարել, և մեր Ազգի Նահապետ Հայկն-էլ՝ Քրիստոսի թուականէն 2300 ասորի առաջ Միջագետքից սովորած եկաւ և բերեց Հայաստան, և իւր 12 որդոց անունները դրեց Հայոց ավանների վրայ, Նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Սրաց, և այլն: Չանազան մեկնու թիւններ կան հին մատենաներումն այս անունների վրայ: Հոռին որ Սեպտեմբերի դէմն է՝ թարգմանում են յոռի. Սահմին՝ սահումի: Քաղոց ավիսը դալիս է Գեկ՝ 10 և տեում է մինչև Յունվ՝ 10: Քաղոց՝ կրկուս քաղելու ավիս է նշանակում: Յունվար՝ Հըռոմայեցոց ամսի անուն է:

Հռոմայեցիք՝ Լատինացոց հին սովորութեամբ, կամ Հռոմայ հինադրի

Հռոմուլոսի կարգադրու թեամբ՝ տա-
 րին 304 օր գիտէին, և 10 ամիս է-
 ին բաժնուժ, և ամիսներուն ուրիշ ա-
 նուն ասել շէին իմանում, այլ ասում
 էին՝ առաջին, երկրորդ, երրորդ, և այլն
 ինչպէս որ մինչև այսօր սևալո՞հոկա՞
 նոյեմ՞ ղեկա՞նչանակում են՝ կօթներոր՞
 ութեր՞ իններ՞ տասներ՞, և ամեն ամ-
 սագլուխ կալենդա էին ասում, և այս
 տեղէն է կալեդար խօսքն-էլ, որ նշ-
 շանակում է կաղանդացոյց, ամացոյց:
 Հռոմայեցիք մէկ շաստուած-էլ ունե-
 ին՝ անունը Յանոս կամ Եանվարիուս,
 որ Լատինացոց ազգասպեան էր և Իտա-
 լիոյ առաջին թագաւոր, և աստուածա-
 ջուցած էր, և այս շաստուածի անու-
 նով Հռոմուլոսի լաջորդ Նումա Պոմ-
 պիլիոսը իւր թագաւորութեան ան-
 վրդով խաղաղութեան յիշատակ Հռոմ
 քաղաքի ճարում որդաստայի մ, ջ մէկ
 դուռն նուիրեց, որ պատերազմի ժամա
 նակը բաց էին անում, իսկ խաղաղու-
 թեան ժամանակը՝ փակում: Այս պա-
 տահեցաւ Քրիստոսէն 700 տարի ա-
 ռաջ, երբ-որ Նումա Պոմպիլիոսը Հռո-
 մայեցոց կր նական ծէսեր օրինագրե-

լով՝ տօմար յօրինեց և տարին (Յուն-
 ուար և Փետրուար) 2 ամիսը աւելց-
 նելով՝ 12 ամիս շինեց և Հայոց կամ
 Քաղղեացոց նման 365 օր արաւ, և
 Եանուարիուս շատուածի անունովը՝
 11 երոգ նորահաստատ ամիսը Յուն-
 ուար կամ Եանվար կոչեց, և Յուն-
 վարը՝ տարեգլուխ արաւ, և այնուհե-
 տե Յունուարի առաջին օրը կամ կա-
 ղանդը՝ որ առաջ լոկ ամսամուտ էր՝
 դառաւ տարեմուտ, և երբ Հայերը ըս-
 կան Հառմայեցոց հետ հաղորդակցու-
 թիւն ունենալ և նոցա ամսոց անուննե-
 րը դորձ ածել կամայ-ակամայ, Յունաց
 կաղանդոս խօսքից Վաղանդը շինեցին,
 և տեղ-տեղ հաստատ սրահեցին Տա-
 րեմըսի վերայ Վաղանդ անունը:

Սորա-էլ գլխաւոր պատճառը աւան-
 դութիւնը նուիրում է Քարսեղ Վեսա-
 րացոյ Ս. Կ խօսքին, որ իբր թէ Յուն-
 վարի առաջին օրը լսելով Յուլիանոս
 ուրացոյ կայսեր մահը՝ ասել է՝ Նոր-
 հաւոր նոր տարի և բարի կաղանդ «:

Այ թէ Քարսեղ Վեսարացին է Յուն-
 վարի Ս. Կը կարդել նոր տարի կամ
 Տարեմուտ, և ոչ թէ նորա անունը նա

է գրել կաղանդ Վերը տեսանք՝ որ ա-
ռաջ քան զնա էր նոր-տարին այն օրը
կարգած և տարեմտի օրը՝ համանգա-
մայն ամսամուտ լինելով՝ կաղանդ էր առ-
վում, որ ոչ թէ տարեմուտ էր նշանա-
կում, այլ ամսամուտ, այլ այնպէս է
պատահել՝ որ Յուլիանոսի մահու լու-
րը ստանալով այն օրը, որ համ նոր տա-
րի էր՝ համ կաղանդ, համ տարեմուտ՝
համ ամսամուտ, և որպէս թէ անել է,
այս ի նշպէս շնորքով նոր-տարի լու-
սացաւ մեզ համար և բարեբախտ կա-
ղանդի հանդիպեցանք:

Հռոմայեցիք նոյնպէս իրանց հին տա-
րեմտի կամ առաջին ամսի անունը պա-
տերազմի Մարտ կամ Հրատ շաստուա-
ծի յիշատակի համար ասել են Մարտ, որ-
ովհետև Հռոմուլոս՝ Հռոմայեցոց նա-
հապետը՝ Մարտի զաւակ էր կարծած:
Հռոմայեցիք մէկ պատերազմասէր ազգ
էին և Մարտը արել էին տարեգլուխ,
մենք-էլ նրաց մէն սովորած՝ պատերազ
մին մարտ ենք ասում, և ի սէր կրօ-
նի պատերազմող մեռնողին ասում ենք
մարտիրոս: Թէպէտ Սսիայի մէջ-էլ
կան այնպիսի ազգեր՝ որ Մարտը ա-

նում են տարեղլուխ, բայց այն՝ Մարտ
 շաստուածի համար չէ, այլ գարնանա-
 մտի համար է, ինչպէս Նավրուզը. և
 նոցա լեզուաւ այս ամիսը Մարտ-էլ չէ
 ասվում, որովհետեւ նոքա ոչ Մարտին
 են ճանաչում և ոչ Մարտը Հռոմայ
 Մ, Զ, Փարեզ քաղաքումը, ինչպէս-որ
 Սանկտ-Պետերբուրգ Ռուսաստանեայց
 մայրաքաղաքումն-էլ կան այժմ Հրատի
 անուամբ լայնատարած որգոստաներ,
 ու Մարտի դաշտ են ասվում:

Սպրիլ ասուեցաւ »աւրէրէ« խօսքէն,
 որ է բացվիլ (ծաղկանց, բանհարի, դա-
 լար արւտի և այլն). [Թէպէտ և ոմանք
 Մարկոս Սվրեչիոս կայսեր անունով են
 կարծում կոչուած:

Մայիս ասուել է Հռոմայ Ծերակուտի
 Սէնաթի կամ Սինկլիտոսի Մայիոս
 անունէն, կամ Հերմէս շաստուածի մօր
 Մայիա շաստուածուհոյ անունէն, որ
 գարնան պաշտպանն էր:

Յունիսը ի պատիւ Յունիոս Բրուտո-
 սի, որ Հռոմայ թագաւորութիւնը
 Հասարակապետութիւն դարձուց:

Յուլիսը Յուլիոս Կեսարի անուամբ,
 որ Հռոմայ Հասարակապետութիւնը

Կայսերութիւն և Միապետութիւն
 փոխարկեց և ինքը առաջին Կայսր
 դառաւ Հռոմայ ինքնակալութեան:

Օգոստոս ի պատիւ Հսկաախանութի
 Հռոմայ երկրորդ Կայսեր, որին-որ
 ազգը նուիրել էր Սեղոսուսանունը,
 որ կրնչանակէ սրբազան:

Իսկ Փետրվարը Հերայ շատուածու-
 հւոյ անուններէն էր, որ մաքրութեան
 վրայ ունէր իշխանութիւն, և զոհ և
 քաւութիւն կրնչանակէ, այն ամսի մէ-
